

վրէժխնդրութեամբ մը՝ մարմնոյ եւ հոգւոյ աղտեղութեան այդ փորձանքը:

Ալաւկայ որդին յառաջ կը տանի: Եթէ պղծուած աղն անգիտաբար կերակրոյ մէջ ձգուի, եւ յետոյ իմացուի, կերակուրը պէտք է թափել (անդ): Դիակը «չոր մսի» վրայ գտուելով, հարկ է անկից երկու կամ երեք «փերթ» կտրել ձգել, ու մնացորդը լուանալ: Իսկ եթէ ալիւրի կամ ցորենի մէջ, սրբելի է զանոնք՝ լեսած աղին ոճով (անդ): Նմանապէս «մորթաղի» մէջ պահուած չոր նիւթի մէջ գտուելով սատակը, կը պատուիրէ նոյն կողմէն երեք լտեր չափ թափել, եւ մնացածն ուտել՝ «բայց յեկեղեցականաց»: Ընկուզի վրայ ընկած դիակը չի պղծեր, եթէ խեճեպով է. իսկ եթէ հանուած է խեճեպէն, աղին կամ ցորենին պէս վարուելու է: Բայց «ծեծածոյ կամ գելասի» վրայ ընկածը կ'ապականէ բոլորը (Գ):

Յ. — Պղծումն ակօրոց: — Անսուրբ առանոց մեռելոտին ոչ միայն կերակրները, այլ անոնց ակօրներն ալ կը պղծէր. եւ թէ ինչպէս վարուելու է ասոնց հետ, յատուկ հրահանգներ կան: Կիրակոս Եզրնկացին կը պատուիրէ՝ որ մկնանկ կամ շան լակած անօթն եթէ փայտեղէն է, դուրս ձգեն, եւ պղնձեղէնը նոր կլայն-